Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.1-Մ6-4 Մասնագետ(2023-11-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն | Աղետների ռիսկի և ճգնաժամային այլ իրավիճակների կառավարման ոլորտում քաղաքականության մշակման ու մոնիթորինգի բաժին | Մասնագետ, (27-33.1-Մ6-4)

1.2 Ենթակա և հաշվետու է

Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը կամ Բաժնի մյուս մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. օժանդակում է հավաքագրված տեղեկությունների հիման վրա աղետների ռիսկի և ճգնաժամային այլ իրավիճակների ոլորտներում տարվող քաղաքականության արդյունավետության համալիր վերլուծության աշխատանքներին.
2. օժանդակում է աղետներին արդյունավետ արձագանքմանը, վաղ վերականգնմանը և հետաղետային վերականգնմանն ուղղված միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման աշխատանքներին.
3. օժանդակում է հաստատված ռազմավարությունների, ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի՝ փրկարար ծառայության ստորաբաժանումների կողմից կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.
4. օժանդակում է մոնիթորինգի նպատակով փրկարար ծառայությունից անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրման և ուսումնասիրման աշխատանքներին.
5. օժանդակում է մոնիթորինգի իրականացման արդյունքում հաշվետվությունների կազմման, ռազմավարական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասով առաջարկությունների մշակման աշխատանքներին.
6. օժանդակում է աղետների կառավարման ոլորտին առնչվող մեթոդական ուղեցույցների և ձեռնարկների, չափորոշիչների ու ստանդարտների մշակման աշխատանքներին:

Իրավունքները.

- համագործակցել Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ.
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ աղետների ռիսկի և ճգնաժամային այլ իրավիճակների և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների խնդիրների լուծման նպատակով:

Պարտականությունները.

- ուսումնասիրել ռազմավարական պլանավորման իրականացման և ռազմավարական փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ տվյալները.
- փրկարար ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ իրականացված մոնիթորինգի արդյունքում հավաքագրել տեղեկատվություն հաշվետվությունների կազմման համար.
- հավաքագրել տեղեկատվություն հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով կազմված Բաժնի ոլորտին վերաբերող հաշվետվությունների մշակման համար.
- աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնի գործառույթներին առնչվող մասով տեղեկությունների տրամադրման նպատակով:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԱՌՆՎԱԶՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: